ԼՃԱՇԵՆԻ ԿԻԿԼՈՊՅԱՆ ԱՄՐՈՑԻ ԿՈՄՊԼԵՔՍԸ

Հայտնի է, որ Լճաշեն գյուղից դեպի տրեբելք, այն մասում, որտեղ լիճը ետ է գնացել, բացվել է դամբարաններով հարուստ բավական ընդարձակ տարածություն։ Հայտնաբերվել են նաև կացարանների պատերի մնացորդներ, որոնք վերաբերում են բրոնզի դարաշրջանին։ Լճի ցամաքած տեղում հայտնաբերված բնակատեղիից ոչ հեռու, Սևան — Կամո ճանապարհի ձախ կողմի մի քարաժայռի վրա, երեսով դեպի լիճը, պահպանվել է մի սեպագիր արձանագրություն, որտեղ ասված է. «Խալդի աստծո հզորությամբ Արդիշտին ասում է. Նվաճեցի ես Կինխունի քաղաքի երկիրը։ Հասա (?) ես մինչև Իշտիկունի քաղաքի երկիրը, Sanձ-ի կողմի լիճը... Արդիշտին թագավոր հզոր, թագավոր Բիաինելի երկրի, կառավարող Տուշպա-քաղաքի»[1]։

Գյուղի հարավային ծայրամասում բարձրացող բլուրների վրա են գտնվում Լճաշենի հայանի Կիկլոպյան ամրոցն ու նրան շրջապատող բնակատեղին։ Այն գրավում է ավելի քան 55 հեկտար տարածություն, որը փռված է 15 բլուրների, նրանց լանջերի ու ձորակների վրա։ Ամրոցն իր դիրքով 50—100 մետր բարձունքից իշխում է շրջակայքի վրա։ Ամրոցի և բնակավայրի արտաքին բերդապարիսպների ընդհանուր երկարությունը հասնում է շուրջ 5000 մետրի, տերիտորիան խիստ քարքարոտ է։ Ամրոցը և շրջակայքը ջրազուրկ են։

Լճաշենի ամրոցն ունի երկու միջնաբերդ, 22 մաստ ու խոշոր քարաբուրգեր ու աշտարակներ։ Ամրոցի, ինչպես նաև միջնաբերդի տերիտորիաները ծածկված են այդ ժամանակի բնակարանների բազմաթիվ ավերակներով։ Ամրոցից դուրս, հարավային և հարավ-արևելյան հատվածներում, նույնպես երևում են բնակատեղիների ավերակներ։ Այդպիսիք կան նաև հարավ-արևմտյան և արևմտյան կողմերի տեղամասերում։

Ամրոցն ու բնակատեղին շրջափակված են եղել բարձր ու լայն պարիսպներով։ Վերջիններս շարված են խոշոր բազալտե ժայռաշարերի բեկորներով։ Քարերն անտաշ են, սակայն պարսպի շարքերում հարմարեցված են այնպես, որ նրանց ստավել հարթ կողմերը դարձված են դուրս։ Պարիսպը երկշար է. լայնությունը երեք ու կես մետր է, իսկ այն հատվածներում, որտեղ թշնամին ավելի դյուրին կարող էր հարվածել, ինչպես նաև միջնաբերդների մուտքերի մոտի հատվածներում, պարսպի լայնությունը հասնում է հինգ և ավելի մետրի։ Պատերի շարքերի մեջ լցված են փոքր քարեր և հիմ։

Ամրոցը կառուցողները խելացիորեն օգտագործել են տեղանքի առանձնահատկությունները։ Պարիսպը կառուցվել է բլուրների առավել բարձր լանջերի վրա, որոնք իրենց մեջ են ընդգրկել ունմատչելի ժայռեր։ Հզոր քարաբուրգերը տեղադրվել են ամենաբարձր բլուրների վրա։ Ամրոցն էլ ավելի ամուր և անխոցելի դարձնելու համար պարիսպները կառուցվել են ոչ թե ուղիղ, այլ կոր գծով, որը հնարավորություն է ընձեռում տարբեր կողմերից նետահարել ճակատով առաջացող թշնամուն։ Այն պարսպամասերը, որոնք ավելի թույլ կամ խոցելի են եղել, վայրին համապատասխան ունեցել են կրկնապարիսպներ և նույնիսկ եռապարիսպներ։

Ամրոցը և միջնաբերդը շրջափակող պարիսպներից բացի ամրոցի տերերը կառուցել են նաև միջնաբերդի գագաթից իջնող ուղղահայաց պարիսպներ, որոնք կկարողանային կանխել թշնամու հարձակման ծավալումը պարսպի հատվածներից որևէ մեկի խորտակման դեպքում և կստեղծեին թիկունքային ու թևային հարվածի հնարավորություններ։ Ուղղահայաց պարիսպներում թողնված են դաղտնի նեղ մուտքեր, որոնք հավանաբար ամրոցի պաշտպանների պարեկների համար էին։

Ամրոցն իր բազմաթիվ կառուցվածքներով, մուտքերով ու ելքերով, աշտարակներով ու կոնտրֆորսներով, միմյանց հատող պարիսպներով նման է մի վերերկրյա լաբիրինթոսի։ Ամրոցի հարավ-արևելյան մասում, օգտագործելով բնական փոքրիկ կիրճերը, արհեստական կերպով ընդլայնել, խորացրել ու երկարացրել են դրանք, ծառայեցնելով որպես թաքստոց բնակավայրի բաց տեղերով շարժվելու համար։ Արհեստական այդ շավիղների ընդհանուր երկարությունը հասնում է շուրջ 200 մետրի, հատակը որոշ տեղերում սալարկված է։ Շավիղները, միանալով միմյանց, մի եռանկյունի են կազմում և ճյուղավորվում հատկապես դեպի ամրոցի ընդհանուր պարսպի հարավային և արևելյան աշտարակները (լուսանկար № 1)։

---

[1] Г. А. Меликишвили, Урартские клинообразные надписи УКН, 134, М., 1960.

* Դամբարաններն ու ամրոցը պեղվում են ՀՍՍՌ ԳԱ հնագիտության և ազգագրության ինստիտուտի կողմից, պատմական թանգարանի ավագ գիտաշխատող Հ. Հ. Մնացականյանի ղեկավարությամբ։ Սկսած 1960 թ. պեղումներին մասնակցում է նաև տողերիս գրողը։

Այսպիսով, Լճաշենի ամրոցը, ամրողջությամբ վերցրած, հանդիսացել է մի դժվարամատչելի, թերևս անխորտակելի պատվար Սևանի ավազանի հյուսիս-արևմտյան վերջավորության վրա և ապահովել, ըստ երևույթին, Ուղուրի-Էտիուանիի ցեղային միության անվտանգությունը հյուսիսից։

Նկ. 1. Լճաշենի ամրոցից դեպի արևելյան աշտարակ տանող, ժայռի մեջ կտրված ճանապարհը

Առաջին միջնաբերդը կառուցված է ամրոցի արևելյան մասում եղած ամենաբարձր՝ ձվաձև, արևելքից-արևմուտք ընկած բարձունքի վրա, ունի ավելի քան մեկ հեկտար տարածություն։ Միջնաբերդի շուրջը տարբեր բարձրությունների վրա կառուցված են երեք շարք պարիսպներ, որոնք տեղ-տեղ հիմնահատակ կործանվել են։

Նրա վրա կան բնակելի շենքերի պարզ երևացող հետքեր, որոնց թիվը հասնում է 70-ի։ 1961—63 թթ. կատարվեցին մի շարք սենյակների պեղումներ, որտեղից հայտնաբերվեցին խեցեղենի բեկորներ և բազմաթիվ խոշոր ու մանր եղջերավոր անասունների ոսկորներ։ Սենյակների վերին շերտերում բացվեցին ջարդված կարասներ ու թոնիրներ, որոնք անշուշտ ուշ ժամանակների մնացորդներ են։ Ստորին շերտերում հայտնաբերվեցին ուրարտական և նախաուրարտական դարաշրջանների հնագիտական նյութեր, ինչպես նաև Լենոլիթյան շրջանի խեցեղենի բեկորներ (կացարան ծր)։ Կացարանների պատերը հաստ են (1,5 մ), բնական ժայռերը օգտագործված են որպես պատ այս կամ այն կողմից, ապա շարվել են մյուս պատերը անտաշ, միջին մեծության բազալտե քարերից, առանց շաղախի։

Միջնաբերդի բնակավայրերի պեղումներից ստացված նյութերը ցույց են տալիս, որ Լճաշենի ամրոցը կառուցվել է դեռևս Լենոլիթյան շրջանում։ Ուշ բրոնզի ժամանակաշրջանում դղալի չափերով ընդլայնվել ու վերակառուցվել են միջնաբերդի շենքերը, որոնք պահպանվել են մինչև ուշ միջնադար։

Միջնաբերդն ունեցել է չորս մուտք։ Առաջինը դեպի արևմուտք նայող մուտքն է, որը հետագայում փակվել է, ունեցել է վեց մետր լայնություն, նրա երկու կողմերում բարձրացել են երկու հզոր աշտարակներ, որոնք հսկել են միջնաբերդից դեպի արևմուտք և հյուսիս-արևմուտք ընկած ուղղությունները։ Այդ մուտքին է մոտենում մոտ չորս մետր լայնություն ունեցող ճանապարհը միջնաբերդի երկրորդ պարսպագոտու մոտով և, անցնելով դեպի արևմուտք՝ թեքվում է հյուսիս-արևմուտք, միանում միջնաբերդի հյուսիսային կողմի մուտքից դուրս եկող ճանապարհին ու իջնելով դեպի հյուսիս-արևմուտք՝ բնակավայրի ցածրանիստ մասում միանում երկրորդ միջնաբերդից իջնող, դեպի արևելք ուղղվող ճանապարհին։ Արևմտյան մուտքից դուրս եկող ճանապարհն իր արևմտյան եզրում ունեցել է արտաքին դիտորդի աչքից ծածկված բարձր պարիսպ, որը միևնույն ժամանակ հանդիսացել է ուժեղ պաշտպանական կոպատ անմիջապես միջնաբերդի պարիսպների տակ։

Միջնաբերդի երկրորդ մուտքը նայում է դեպի հյուսիս։ Այն, հավանորեն, գոյություն ունի միջնաբերդի կառուցման առաջին իսկ օրերից, միայն թե հետագայում, ինչպես պարզվեց կատարված պեղումներից, վերակառուցվել, նեղացվել է։ Հին մուտքից, որի լայնությունը 6 մետր է, ազատ կերպով կարող էր շարժվել ինչպես մարտական անվավոր տրանսպորտը, այնպես էլ գումակը[2]։ Մուտքի երկու կողմերում երևում են խոշոր աշտարակների հիմքերը, որոնց բարձրությունը հիմքից հավասար է չորս մետրի (լուսանկար N 2)։ Աշտարակները շարված են փոքր-ինչ տաշված, միմյանց հարմարեցված, մինչև երկու խորանարդ մետր ծավալ ունեցող բազալտե քարերով։ Հյուսիսային կամ երկրորդ մուտքից դուրս եկող ճանապարհի արտաքին եզրով նույնպես անցել է մի անխորտակելի պատնեշ, որի մնացորդները երևում են։ Այդ պարիսպը միջնաբերդի պաշտպանության գործում խաղացել է նույն դերը, ինչ վերը նկարագրվածը։ Միջնաբերդի ներսում, մուտքին զուգահեռ, երկու կողմերից երևում են շենքի պատերի հիմքերը։



Նկ. 2. Լճաշենի I միջնաբերդի հյուսիսային մուտքը

Միջնաբերդը մուտք ունի նաև արևելյան կողմից։ Այս երրորդ մուտքը նայում է դեպի լիճը և ավելի նեղ է, լայնությունը՝ մեկ ու կես մետր։ Մի նեղ շավիղ, մուտքից դուրս գալով՝ միջնաբերդի բարձունքի թեք լանջով իջնում է դեպի հարավ-արևելք, երկրորդ պարսպի մոտով։ Ճանապարհը այժմ ծածկված է վերևի պարիսպներից թափված քարերով։

Չորրորդ մուտքը իր կառուցվածքով նման է երրորդին, միայն այս մուտքի լայնությունը սեկ մետր է, դարձած է դեպի հարավ, որտեղ տարածված է բնակատեղիի հիմնական մասը։ Մուտքն առաջին անգամ հայտնաբերվեց և բացվեց մեր կողմից 1961 թ. պեղումների միջոցին։ Այստեղ երևում են քարե աստիճանների հետքեր, որոնք սկզբում ուղիղ են, իսկ հետո թեքվելով հարավ-արևելք իջնում են դեպի երկրորդ պարբերազոտու մուտքը, այնուհետև ձգվում դեպի երրորդ պարիսպը և մտնում բնակատեղին։

Միջնաբերդն ունի երեք կրկնապարիսպներ, որոնք շուրջպատում են միջնաբերդի բարձունքը բոլոր կողմերից։ Այդ պարիսպների միջև ընկած տարածությունը, նայած լանջի ռելյեֆին, հասնում է 15—30 մետրի։ Այստեղ կառուցված են եղել բնակելի շենքեր։ Պարիսպները հիմնականում անգված են, սակայն նրանց կանգուն մնացած առանձին հատվածները վկայում են ընդհանրապես ամրոցի և առանձնապես միջնաբերդի հզորության մասին։ Միջնաբերդի պարիսպների լայնությունը նույնն է, ինչ ամրոցի ընդհանուր պարիսպինը (3,5—5 մ), քարերի մեծությունը,

---

[2] С. Есаян. Из истории колесного транспорта древней Армении, «Պատմա-բանասիրական հանդես», 1960, N 3, էջ 143։

տոանձին դեպքերում, հասնում է երեք իտրանարդ մետրի, բարձրությունը տեղ-տեղ պահպանվել է մինչև հինգ մետր։

Միջնաբերդը, բացի կրկնապարիսպներից, ունի նաև տարբեր կետերից դեպի բարձունքի ստորոտը իջնող մի քանի պարիսպներ՝ իրենց նեղ անցքերով։ Հայտնաբերել ենք երեք այդպիսի ուղղաձիգ պարիսպ։ Առաջինն իջնում է միջնաբերդի հարավ-արևելյան անկյունից մինչև ստորոտը և հատում հորիզոնական կրկնապարիսպները։ Երկրորդ նմանօրինակ պարիսպն իջնում է բարձունքի հյուսիս-արևելյան անկյունից, որի մեջ ավելի որոշակի երևում է դաղտնի մուտքը։



Լճաշենի կիկլոպյան ամրոցի հանույթը

Երրորդ պարիսպն իջնում է բարձունքի հարավ-արևմտյան անկյունից և միաձուլվում բնակավայրի պարսպի հետ։ Այսպիսով, ուղղահայաց իջնող պարիսպները միջնաբերդի լանջերը բաժանում են երեք անհավասար հատվածների, ընդ որում հարավ-արևելյանը ավելի փոքր է, քան հյուսիս-արևելյանը, իսկ վերջինն ավելի փոքր է, քան հարավ-արևմտյանը։

Կարելի է ենթադրել, որ ամրոցի և միջնաբերդի տերերը, գիտենալով, որ իրենց գլխավոր թշնամուն պետք է սպասել հյուսիսից կամ հյուսիս-արևմուտքից, միջնաբերդի բարձունքի հյուսիսային և հյուսիս-արևմտյան լանջերն ավելի են ամրացրել ուղղահայաց պարիսպներով։ Իրենց կառուցվածքով ուղղաձիգ պարիսպները ոչնչով չեն տարբերվում ամրոցի մյուս պարիսպներից։

Միջնաբերդում, ինչպես նաև ամրոցի մյուս մասերում, բնակատեղիները հիմնականում նիստարոլորաձև հատակագիծ ունեն, կան նաև քառանկյունի տներ։

Լճաշենի ամրոցի և նրա միջնաբերդերի կառուցման տարբեր փուլերի մասին պատկերացում կարելի է կազմել ոչ միայն շինարարության տեխնիկայից, այլև հայտնաբերված հնագիտական նյութերից։

Առաջին միջնաբերդի արևմտյան պարսպի տակի կացարան-դահլիճի սենյակներին շերտից (2,1 մետր խորությունից) հայտնաբերվեցին էնեոլիթյան ժամանակաշրջանի խեցեղենի բեկորներ։ 11-րդ սենյակի հյուսիս-արևելյան պատի տակ հայտնաբերվեց կրակարան (1,9 մետր խորության վրա)։ Փոսը լցված էր մոխրով և վառված փայտածուխի մանր փշրանքով, շուրջերը մեկ շարքով շարված էին մանր քարերով՝ խորությունը 40 սմ։ Կրակարանն ունի 1,1 մետր տրամագիծ։ Այցտեղից ոչ հեռու գտնվեց մի քար (բազալտ), որի մեկ երեսը հղկված-փորագրված է։ Այդ փորագրությունը թերևս հիշեցնում է գետի ձուլելու կաղապար։ Փորագրված մասը ունի կարմրավուն գույն, ընդհանուր մակերեսից ցած է 1,7 սմ, լայնությունը 13,5 սմ է, երկարությունը՝ 38 սմ։ Այդ փոսից քիչ հեռու գտնվեց մի այլ կրակարան, նույն մակարդակի վրա, որը նույնպես լցված էր փայտածուխի մնացորդով և մոխրով։ Ի տարբերություն առաջին փոսի, սա բոլորաձև չէ, այլ ունի ուղղանկյան ձև (60×40 սմ), դոնակը (բաց կողմը) նայում է դեպի արևելք։ Նրա կողերին դրված էին բազալտ քարեր 50—60 սմ երկարությամբ և 25—30 սմ բարձրությամբ։ Հավանորեն այս երկու կրակարանները կապված են եղել միմյանց հետ։

Վերոհիշյալ սենյակի պատերը վերին մասում (60—80 սմ) շարված են միջին մեծության բազալտ քարից։ Այստեղից գտնված նյութերը պատկանում են տարբեր ժամանակաշրջանների։ Նույնը պետք է ասել նաև ամրոցի կոմպլեքսի տարբեր հանգույցների մասին։ Ամրոցի և բնակավայրի պարիսպների ու պատերի անտաշ, անձև հսկա շարվածքների տեխնիկան տարբերվում է ուրարտական ժամանակաշրջանի շինարարական տեխնիկայից։ Այստեղ նկատվում են բավականին ուղիղ գծով շարված պատեր, քարերը տաշված են, մշակված կողերը նայում են դեպի դուրս։ Միջնաբերդերի մուտքերի ու աշտարակների շարվածքը կատարված է ավելի խնամքով, որից երևում է, որ այն վերաբերում է ավելի ուշ շրջանի։ Բ. Բ. Պիոտրովսկին գտնում է, որ Լճաշենի ամրոցը ունեցել է երկու, գուցե և ավելի կառուցողական շրջաններ[3]։ Այսպիսով, ակներև է դառնում այն կարծիքը, որ Լճաշենի ամրոցը կառուցվել է երկար տարիների, գուցե և դարերի ընթացքում և հարատևել է մինչև ուշ միջնադար։

Երկրորդ միջնաբերդը գտնվում է ամրոցի հյուսիս-արևմտյան ծայրամասում, առաջինից 300 մետր հեռու ընկած գոգավոր բլրի վրա, որը բարձրանում է Սևան — Կամո Ճանապարհի անմիջապես եզրին (բարձրությունը 25—30 մ)։ Բարձունքի աջ կողմից լավ երևում է դեպի հյուսիս տարածվող հարթավայրը մինչև Սևանի կղզին, իսկ ձախից՝ արևմտյան կողմում ընկած դաշտերն ու լեռնալանջերը։

Միջնաբերդը գրավում է բնակատեղիների ավերակներ ունեցող մոտ մեկ հեկտար տարածություն։ Երկրորդ միջնաբերդի կատարն ավելի ցածր է քան առաջինը։ Այս բարձունքն ունի գագաթի եզրերով անցնող չորս մետր լայնությամբ պարսպի հիմքեր։ Բացի հիմնական պարսպից, որն անմիջապես շրջապատում է գագաթը, այս միջնաբերդը, ինչպես և առաջինը, ունի նաև կրկնապարիսպ, որն իր կառուցման տեխնիկայով չի տարբերվում ամրոցի պարիսպներից։ Այն ունի մեկ մուտք իր հարավ-արևելյան մասում։ Մուտքից աջ և ձախ պարիսպների հիմքերը ավելի լայն են, քան ընդհանուր պարսպինը, հավանաբար այստեղ, ինչպես նաև առաջին պարսպի մուտքի մոտ, եղել են աշտարակներ։

Միջնաբերդի մուտքը դուրս է գալիս դեպի արևելյան կողմում եղած բնակատեղին, որտեղից 20 մետր հեռավորության վրա երևում է կրկնապարիսպը, որն անցնում է հյուսիս-արևելքից դեպի հարավ-արևելք և ունի իր մուտքը։ Մուտքի աջ և ձախ կողմերում երևում են աշտարակների հետքեր։

Հարավ-արևելյան միջնապարիսպն անցնում է միջնաբերդի շարունակությունը կազմող մի բարձունքի վրայով, որի հյուսիսային և հարավային լանջերը, ինչպես նաև սարահարթը, ծածկված են բազմաթիվ բնակարանների ավերակներով։ Միջնապարիսպում երևում են մուտքի

[3] Б. Б. Пиотровский, Ванское царство, М., 1959, էջ 71։

հետքեր և այդտեղից դուրս եկող ճանապարհը, որը լանջով իջնում է դեպի արևելք և միանալով առաջին միջնաբերդից եկող ճանապարհին, հատվում ներկայիս խճուղում։

Ամրոցի տերերը առավել վտանգավոր թշնամուն սպասել են հավանորեն հյուսիսից և հյուսիս-արևմուտքից, ուստի և կարիք է զգացվել կառուցել (գուցե և միևնույն ժամանակ) երկրորդ միջնաբերդը, որը, ինչպես տեսանք, իջնում է առաջին միջնաբերդի տեսադաշտից դուրս մնացած ուղղությունների վրա։ Հիրավի, այս երկու միջնաբերդերի քսաներկու աշտարակների միացյալ համագործակցությունն անխորտակելի կարող էր դարձնել Լճաշենի շեն-ամրոցը։

Ծանոթանալով Լճաշենում հայտնաբերված սեպագիր արձանագրություններ, որը թողել է, ինչպես նշվեց, Արդիշտի I-ը, հանգում ենք այն եզրակացության, որ հավանաբար Արարատյան դաշտն ամրոցներին նվաճող Արգիշտին Լճաշենում կանգ է առնում, թերևս Լճաշենի ամրոցի շինարարություններ ընկճել չկարողանալու պատճառով։ Արձանագրությունում ասված է, որ Արգիշտին գրավեց Իշտիկունի քաղաքը, սակայն Իշտիկունի քաղաքը թերևս, ոչ թե Լճաշենի ամրոցն է, այլ այն բնակատեղին, որը հայտնաբերվեց արձանագրությունից ոչ հեռու, լճի ցամաքած մասում։

Վերևում ասվեց, որ Լճաշենը մի դուռ է դեպի Սևանի արևմտյան և հարավային ափերը, որտեղից անցնողը համարյա առանց մեծ դիմադրության կհասներ մինչև Գավառագետի հովիտ և կնվաճեր այն։ Սակայն հայտնի է, որ Լճաշենից այն կողմ Արդիշտիի արձանագրություններն հայտնաբերվել առայժմ, իսկ խորխորոյան տարեգրությունում չի հիշատակվում Սևանի շրջակայքի երկրների մասին[4]։

Թշնամու հարձակումը կանխելու և նրան հակահարված տալու համար ամեն մի խոշոր կենտրոնական ամրոց իր հեռու և մերձակա մատույցներում ունեցել է ավելի փոքր ամրոց-պահակակետեր իրենց փոքրաթիվ կայազորներով կամ պահակախմբերով. սրանք պահակային ծառայություն էին կատարում թշնամու անակնկալ հարձակման դեպքում կամ կազմակերպում էին հետախուզական գործողություններ, երբ ծրագրում էին արշավել թշնամու վրա։ Լճաշենի ամրոցը, մեր կարծիքով, հեռավոր ու մոտիկ մատույցներում ունեցել է այդպիսի պահպանական պահակակետեր։

Սևան քաղաքից մոտ մեկ կիլոմետր դեպի հյուսիս կա մի բարձունք, որը հանդիսանում է Փամբակի լեռնաշղթայի ամենահարավային գագաթներից մեկը։ Բարձունքը արևելքից, հարավից և արևմուտքից խիստ թեքությամբ, կոնաձև վեր է խոյանում, լանջերը ծածկված են հրաբխային տուֆի կամ այլ խառնուրդի բեկորներով։ Դագաթը շրջապատից բարձր է շուրջ 600 մետր և դժվարամատչելի է։ Տեղացիների մեջ բարձունքը հայտնի է «Մեծեփ» անունով։ Նրա վրա կա ավերակ մի մատուռ, որին նույնպես Մեծեփ անունն են տալիս։

Գագաթի կոնֆիգուրացիային համապատասխան՝ եզրերով անցնում են կիկլոպյան ամրոցի պարիսպների հիմքերը, որոնց բարձրությունը պահպանվել է գետնի մակերեսի վրա մեկ-երկու շարքով, այն էլ ոչ բոլոր տեղերում։ Այս նորահայտ ամրոցն ունի 225 մետր երկարություն և 25—30 մետր լայնություն։ Պարիսպներում կան երեք աշտարակների հետքեր, որոնցից մեկը (5×5) կառուցված է եղել միջնաբերդի հյուսիս-արևմտյան անկյունում, մյուս երկուսը, նույն մեծությամբ, գտնվում են հյուսիս-արևելյան և հարավ-արևելյան անկյուններում։ Այդ աշտարակների միջև ընկած պարսպի կենտրոնում երևում է մուտքի բացատը։

Ամրոցի հյուսիս-արևմտյան անկյունից, նշված աշտարակից մոտ 50 մետր հեռու, սկսվում է կրկնապարիսպը կամ արտաքին պարիսպը, որը գնալով դեպի արևելք, դառնում է դեպի հարավ և այսպես աստիճանաբար շեղվելով դեպի հարավ-արևելք, կազմում է միջնաբերդի արտաքին պարիսպը։ Այս պարսպին զուգահեռ հյուսիս-արևելյան լանջով անցնում է երրորդ պարիսպը (35—40 մետր), որը սակայն չի շարունակվում մինչև վերջ։ Պարիսպների կառուցվածքը նույնն է, ինչ Լճաշենի ամրոցինը, միայն այստեղ քարերն ավելի փոքր են և տափակ։

Ամրոցի ներսում և նրանից դուրս նկատվում են փոքրաթիվ քանակությամբ կացարանների ավերակների հետքեր։ Մեծեփը գտնվում է Լճաշենից մոտ 5 կիլոմետր հեռավորության վրա. Լեռան գագաթից երևում է դրեթե լճի ամբողջ հայելին, իր ափերով հանդերձ, իսկ դեպի արևմուտք՝ Հրազդան գետի հովիտը Սևան — Երևան խճուղիով, մինչև Հրազդան քաղաքը։ Պետք է ենթադրել, որ Մեծեփ լեռան գագաթին եղած կիկլոպյան ամրոցը հանդիսացել է մի պահակա-

4 Նույն տեղում։

* «Մեծեփ» անունը, ըստ երևույթին, կապված է Մեծոփ վանքի անվան հետ, որի «ոտ»-ն փոխվել է «եռ»-ի։ Մեծոփը գտնվում է Արևմտյան Հայաստանում, Վանա լճի ափին, Արճեշից 30 կմ դեպի հյուսիս։

յին կա Լճաշենի ամրոցի հնամյա մատույցներում, իր փոքրիկ կայազորով, որը թշնամու երևալու դեպքում կդիմագրեր և ազդանշաններով կամ սուրհանդակների միջոցով կնախազգուշացներ մոտալուտ վտանգի մասին։

Լճաշենի ամրոցից մոտ երկու կիլոմետր դեպի հյուսիս, լճի վերջերս բացված հատակում, բազմաթիվ գամբարանների հետ գտնվեց նաև մի փոքր բնակավայր, որի ընդհանուր տարածությունը չի անցնում կես հեկտարից։ Այս բնակավայրի ավերակներն ընկած են երկարավուն մի բլրակի վրա, որն իր շրջապատից բարձր է 5—6 մ։ Բնակավայրի ավերակները դարեր շարունակ մնացել են Սևանի ջրերի տակ, պատերը համարյա ամբողջովին քանդվել են և քարերը կուտակվել են բլրի գագաթին կամ շրջակայքում։

Սակայն գիտելով հյուսիսային ծայրամասում պահպանված կանոնավոր շարքով պարսպի հատվածը (12 մետր), կարելի է ենթադրել, որ այստեղ հենց եղել է ինչ-որ կառույց, որ կապված է եղել Լճաշենի ամրոցի հետ։ Պարսպի գիծը կան խոշոր քարերի կուտակումներ, որոնք, մեր կարծիքով, եղել են աշտարակ-դիտակետեր, որոնցից երկուսի միջև ընկած բլրակի հարավ-արևմտյան եզրին գտնվող տարածությունը եղել է մուտք։ Մեր կարծիքով, հարթության մեջ-նված միակ բլրակի վրա գտնվող այս փոքրիկ ամրոցը, որտեղից դիտվում են Մեծեփի գագաթը և Լճաշենի ամրոցը, եղել է Լճաշենի ամրոցից դուրս բերված մի պահակակետ՝ նրա մոտակա մատույցներում։

Լճաշենի ամրոցից դեպի հարավ, Սևան — Կամո ճանապարհի մոտ առաջին ընկած հայտնաբերեցինք ու հանույթագրեցինք մի կիկլոպյան ամրոց կամ միջնաբերդ իր շրջակա բնակավայրով։ Նշված ամրոցը կամ միջնաբերդը գտնվում է Նորաշեն գյուղից երկու կմ դեպի արևմուտք։ Ամրոցն իր շրջապատի նկատմամբ ուներ գերիշխող դիրք, սակայն ռազմական խոշոր նշանակություն ունենալ չէր կարող, քանի որ այդ բարձունքից դիտվում է ոչ ավելի քան 1,5—2 կմ շառավիղով։

Միջնաբերդի պարիսպների ընդհանուր երկարությունը մոտ 400 մ է, հյուսիսից հարավ ամրոցն ունի 120 մ երկարություն և 80 մ լայնություն, զբաղեցնում է շուրջ մեկ հեկտար տարածություն, իր արևելյան լանջով խիստ թեք է և ժայռապատ (60—70 մետր բարձրությամբ), մյուս լանջերը ավելի քիչ թեքություն ունեն և այդքան բարձր չեն իրենց շրջապատից։ Միջնաբերդի հարթ տարածությունները ծածկված են կացարանների ավերակներով, կացարանների հետքեր են երևում բլուրների խորշերում ու քարանձավներում։ Միջնաբերդի պարիսպները, որոնց մեջ պարզորոշ կերպով երևում են հարավ-արևելյան և հյուսիս-արևելյան մուտքերը, լավ են պահպանված։ Այստեղից դուրս է գալիս մի ուղի, որը գնալով դեպի հյուսիս-արևելք, մտնում է երկու բլուրների միջև ընկած ձորակի մեջ ու այդպես շարունակվում մինչև բնակավայրի վերջը։ Մյուս մուտքը, որն ավելի նեղ է, հարավային լանջով իջնում է դեպի հովիտ և կորչում բնակատեղիում։

Պարիսպների վրա լավ երևում են 11 քարաբուրգերի հիմքերը, որոնցից չորսը գտնվում են երկու մուտքերի աջ և ձախ կողմերում, հավասար մեծությամբ (5×5 մ)։ Նույն մեծության մի այլ աշտարակ գտնվում է պարսպի հարավ-արևելյան անկյունում, մուտքին անմիջապես մոտ, մյուսը՝ հյուսիս-արևմտյան անկյունում. մի այլ աշտարակ կանգնած է հարավային պարսպի վրա՝ մուտքից 20 մետր հեռավորությամբ դեպի արևմուտք։ Մնացած չորս աշտարակները իրարից 7—10 մետր հեռավորության վրա են արևմտյան պարսպի կենտրոնական մասում։ Աշտարակների այսպիսի դասավորությունը պետք է ապահովեր ամրոցի պաշտպանությունը թշնամու հարձակումներից։ Պարիսպները չորս կողմից հավասար լայնություն ունեին (4 մետր), շինարարության տեխնիկան նույնն է, ինչ որ Լճաշենի կիկլոպյան պարիսպներինը, միայն այստեղ քարերը ավելի մանր են։ Պարիսպները տեղ-տեղ պահպանվել են 2—4 մետր բարձրությամբ։

Այս ամրոցը տեղացիների մոտ հայտնի է «Աղրլի բերդ» անունով։ Միջնաբերդը և նրա շրջապատը ջրազուրկ են։ Մեր հավաքած խեցեղենի վերաբերյալ բեկորները և այլ նյութերը, որոնք գտնվել են հանույթագրման միջոցին, չեն կարող հնարավորություն ընձեռել ամրոցի ժամանակագրությունը պարզելու համար, սակայն նայելով պարիսպների ու աշտարակների կառուցման արվեստին, կարելի է այն թվագրել երկրորդ հազարամյակի վերջով (մ. թ. ա.)։

Վերը նկարագրվածից պարզ է դառնում, որ Լճաշենի կիկլոպյան ամրոցը պաշտպանական ամրությունների կոմպլեքս է եղել, իր հնամյա ու մերձակա փոքրիկ ամրություններով, իսկ շրջակա ցեղերի վրա հարձակվելու ժամանակ այդ առաջապահ ամրություններից հետախուզական գործողություններ են տարվել, նախապատրաստելով հարձակումը թշնամու դեմ։

Գ. ՄԻՔԱՅԵԼՅԱՆ